

Հայ գրականության հանրապետական օլիմպիադայի հարցաշարեր IX դասարան

Պատասխաններ

1.«Արա Գեղեցիկ և Շամիրամ» հնադարյան վիպերգը հայ ժողովրդի կենսափիլիսոփայության հնագույն վավերագրերից մեկն է, որը մեզ է հասել Քերթոդահոր շնորհիվ: Այն ունեցել է բազմազան գրական մշակումներ ու արձագանքներ, քանզի մինչ այսօր էլ արդիական է իր խորունկ հայրենասիրությամբ, մարդու էության բացահայտման բացառիկ իմաստությամբ: Վիպերգը Ք. ա. 9-րդ դարի պատմական անցքերի արձագանք է: Արան՝ Արամ արքայի արժանավոր ժառանգորդը, հոր մահից հետո դառնում է Հայաստանի խնամակալը: Այս չափազանց գեղեցկատես դյուցազնի համբավը հասնում է Ասորեստանի թագուհի Շամիրամին, որն էլ, Պատմահոր վկայությամբ, «տոփանքով սիրահարվել էր Արայի մասին եղած պատմություններին՝ որպես թե նրան տեսնելիս լիներ»: «Շամիրամ իր ախտը համարձակ պատվելով՝ Արա Գեղեցիկի մոտ պատգամավորներ է ուղարկում ընծաներով և նվերներով, և շատ աղաչանքներով և պարզների խոստումով խնդրում է գալ Նինվե՝ իր մոտ, և կա՛մ իրեն կին առնել և բոլորի վրա թագավորել, կամ նրա ցանկության կամքը կատարել ու մեծամեծ նվերներով խաղաղությամբ իր տեղը դառնալ»: Առաքինի ու հայրենասեր հայոց արքայից մերժվելով՝ նա գորքով շտապում է Հայաստան «ոչ այնքան Արային սպանելու, որքան նվաճելու և իր ձեռքը զցելու, որպեսզի իր ցանկության կամքը կատարե, որովհետև մոլեգին ցանկությունից ցնորվել էր»: Նա հրամայում է Արային կենդանի բռնել, բայց հայոց արքան զոհվում է այն դաշտում, որ իր անունով կոչվեց Այրարատ: Հայոց գորքը պարտվում է, բայց հաղթում է հայ ժողովրդի ազատ ապրելու կամքը, հաղթում է իր հողին նվիրված ու հայրենիքը սիրող հայր, քանզի, որքան էլ Շամիրամը դիմում է կախարդական դյուխանքների՝ Արային կենդանացնելու ու ժողովրդին խաղաղեցնելու համար, միևնույն է, պարտվում է վավաշտոն գեղեցկուհին՝ չստանալով ո՛չ իր ցանկալի տղամարդուն, ո՛չ Հայաստան աշխարհը, բայց դարերի հոլովությամբ մնում է տոփանքի ու վավաշտության մարմնացում: Ըստ Պատմահոր թողած տեղեկությունների՝ Շամիրամը Հայաստանում մեծամեծ գործեր է կատարում «Եվ տեսնելով երկրի գեղեցկությունը, օդի մաքրությունը, բխող մաքուր աղբյուները, ու բարեզնաց գետերը», կառուցում է մի հոյակերտ քաղաք և «տարվա շրջանի մի չորրորդ մասը անցկացնում է Հայաստանում»: Շամիրամի կառուցած շինությունները և Շամիրամի առուն մինչ այսօր էլ հիացնում ու զարմացնում են հետագա սերունդներին:

Ինչպես բոլոր ավանդավեպերում կան առասպելական և պատմական դրվագներ, այնպես էլ այս սքանչելի ավանդավեպում: Արան հայոց դիցաբանության մեջ մեռնող և հարություն առնող աստվածություն է. համապատասխանել է հունական Ադոնիսին: Նա անձնավորել է զարունը, ունեցել է նաև ռազմի աստվածության հատկանիշներ: Շամիրամը նույնպես ունի դիցաբանական արմատներ: Ըստ ասուրական առասպելի՝ նա Դերկետո աստվածուհու դուստրն է՝ սիրո և պտղաբերության աստվածուհին՝ դարձյալ օժտված լինելով ռազմի աստվածության հատկանիշներով: Նա միաժամանակ պատմական անձնավորություն է՝ Շամմուրամաթ թագուհին (Ք. ա. 810-806), Ասորեստանի թագուհին, որի օրոք Ասորեստանի և Արարատյան թագավորության միջև ընդհարումներ են եղել: Առասպելական են արալեզները, որոնք իբր լիզելով կենդանացնում են մեռյալներին, առասպելական է Շամիրամի քարանալը, Արա աստծո մարդեղենացումը: Քերթոդահայրը հավատացած է եղել, որ հեթանոս աստվածները ի սկզբանե մարդիկ են եղել և այդպես էլ ներկայացրել է Արա արքային և Արա

աստվածությունը; Պարտվողն այստեղ մեծ հաշվով պատերազմն է, բռնապետությունը, իշխանատենչությունը. անբարոյականությունը. հաղթում է ազնիվ ու արդար, խաղաղ ապրելու կամքը, ազատասիրությունը, բարոյականությունը:

2.Ղազար Փարպեցին Ոսկեդարի վերջին պատմիչն է: Նա ունի ստուգապատում պատմիչի համարում: Փարպեցու կենսագրական տվյալները հավաստի են, քանի որ իր «Թուղթ Վահան Մամիկոնյանին: Ստախոս արեղաների մեղավորությունը» ուղերձում ներկայացնում է հավաստի տվյալներ: Ծնվել է հավանաբար 443-ին, Արագածոտն գավառի Փարպի գյուղում. այստեղից էլ՝ Փարպեցի: Մանկության տարիները անց է կացրել վրաց Աշուշա բղեշխի պալատում՝ ապագա մարզպան Վահան Մամիկոնյանի հետ: Բղեշխի կինը՝ Անուշ Վռամը Վահան Մամիկոնյանի մորաքույրն էր: Այդ մասին Փարպեցին գրում է.«Մանկության օրերի իմ կյանքը, դու ինքդ, տեր, լավ գիտես»: Նրանք այնտեղ էին ուղարկվել Ավարայրի ճակատամարտից հետո և աշակերտել Մաշտոցի աշակերտ Ադան Արծրունուն: Ուշիմ աշակերտ Փարպեցուն ուղարկում են «Հռոմոնց երկիր», որտեղ, հավանաբար, մնում է 465-470 թ.թ.: Սկսվում է պարսից դեմ հայոց ապստամբությունը, և Փարպեցին մեկնում է Սյունիք, ապրում քարայրում ոմն Մովսեսի հետ, որը հավանաբար Մովսես Խորենացին է: 486- 490 թթ. նա նշանակվել է Վաղարշապատի վանքի վանահայր. «Մեծիմաստ մարզպան, Հայոց զորավար , տեր Մամիկոնեից Վահանը, կամենալով դարձնել իրեն առավել մերձավոր ու սիրելի, նրան հանձնեց Նոր քաղաքի հոյակապ ու ականավոր այն տեղը, որ Սուրբ Կաթողիկե եկեղեցին է իր վանքերով: Եվ նա, մարզպանի խոսքն ընդունելով, խնամք էր տանում այդ տեղի վրա»: Վանահայր դարձած Փարպեցին բարեկարգել է վանքը, հիմնել մատենադարան, որը այսօրվա Մատենադարանի նախատիպն է եղել:Փարպեցին իր Պատմությունը գրել է իր ընկեր և հովանավոր մարզպան Վահան Մամիկոնյանի պատվերով «...Հարկադրաբար ստիպեց մեզ ձեռնարկել մի գործ, որ վեր է քան մեր գիտության ուժը », համեստորեն արձանագրում է պատմիչը: Իր գիրքը Փարպեցին գրել է. ամենայն հավանականությամբ, 490-ից հետո, քանի որ 509-ին վախճանվել է Վահան Մամիկոնյանը:Պատմությունն ընդգրկում է շուրջ 100 տարվա պատմություն՝387-ից, երբ «Հայոց աշխարհը հնացած ձորձի նման պատռվելով՝ երկու ծվենի բաժանվեց», մինչև 481 թվականը՝ Վահանանց պատերազմը: Մատյանը բաղկացած է մուտքի հինգ գլուխներից և երեք դրվագից: 1-ինը՝387-428, 2-րդը՝Ավարայրի ճակատամարտ, 3-րդը՝Վահանանց պատերազմ: Փարպեցու «Հայոց պատմություն»-ը մեր մատենագրության անփոխարինելի գանձերից է և մեր գրականության անհերքելի սկզբնաղբյուրներից:

3.Ներկայացված քառատողի հեղինակը անմահ Չարենցն է՝Նաիրյան երկրի իմաստուն զավակը, ում համար հայ նոր գրականության հիմնադրի կերպարը եղել է ներշնչանքի ու անհուն սիրո առհավատյա: Այն նվիրված է Խաչատուր Աբովյանին, «այրվելով այրվեց» իր հայրենիքի, իր լեզվի, իր ուխտի համար: Իսկ ուխտը՝«Շո՛ւնչդ տուր, հոգի՛ դ, բայց քո հայրենիք մի՛ տար թշնամյաց»: Հայ նոր գրականության հիմնադիրը ծնվել է Քանաքեռում, սովորել է Էջմիածնի միաբանության դպրոցում, Ներսիսյան դպրոցում, ապա, պրոֆեսոր Պարբոտի աջակցությամբ՝ Դորպատի համալսարանում: Վերադառնալով Հայաստան՝ ձեռնամուխ է լինում հայոց լեզվի, հայ գրականության նորոգմանը՝ դառնալով Գրապայքարի առաջամարտիկներից: Աբովյանն անցնում է տառապալից ճանապարհ՝ բանասրկություններ,

գրպարտություններ, համատարած անգրագիտություն, բայց նաև հավատ ու սեր իր ժողովրդի ապագայի նկատմամբ: Նա գրում է «Նախաշավիղ կրթության» դպրոցական դասագիրքը, առակներ, բանաստեղծություններ, պատմվածքներ, բայց նրա թողած ժառանգության մեջ անշրջելի է «Վերք Հայաստանի» վեպը, որի ենթավերնագիրը «ողբ հայրենասիրի», ամեն ինչ բացահայտում է: Այս վեպը մեր ազգային ավետարաններից է, մեր նոր գրականության զարգացման հրովարտակը, մեր ամենօրյա աղոթքը: Նալբանդյանի հրաշալի բնութագրմամբ՝ «մարմին է առել ազգի հոգին»: «Այնտեղ Հայաստան աշխարհն է իր տարերային-տիտանական պեյզաժներով: Այնտեղ ժողովուրդն է իր միջական և պատմական անցյալով, իր հին առասպելներով ու ավանդություններով...» Ավ. Իսահակյան: Վեպն ունի «Հառաջաբան», որտեղ Աբովյանը ներկայացնում է մեր գրականության զարգացման ծրագիրը՝ 1.լեզվի հարցը՝ աշխարհաբար (ամեննին չթերագնահատելով ոսկեդենիկ գրաբարը), 2.գրել մարդու հոգևոր և աշխարհիկ կյանքի բովանդակությունից, 3.ընտրել ժողովրդի ծոցից էլած և իրական անձնավորություն: Հենց այս սկզբունքներն էլ դառնում են մեր գրականության հետագա զարգացման ծրագիրը մինչ այսօր:

4.Հայ ժողովրդի հերոսական դյուցազնավեպը մեզ հետ է մեր ողջ գիտակցական կյանքում: Էպոսի հերոսները ապրում են մեզ հետ, մենք նրանց կերպարին ենք դիմում, նրանց ենք ապավինում մեր պատմության բոլոր ժամանակներում. Սանասարն ու Բաղդասարը, Մեծ ու Փոքր Մհերները, Ձենով Օհանն ու Ցոան Վերգոն, Խանդութն ու Ծովինարը վաղուց դարձել են հասարակ անուններ: Բայց Սասունցի Դավիթը՝ հայ Աքիլլեսը(Չարենց), մեր ուղեկիցն է ամբողջ կյանքում: Այս կերպարը իր անսահման մարդասիրությամբ, պարզությամբ, միամտությամբ, արդարադատությամբ, հերոսականությամբ ու այլ հրաշալի հատկանիշներով ոչ միայն մարմնավորում է մեր ժողովրդին, այլև հարազատ է յուրաքանչյուրիս: Նա այսօ էլ պարզել է իր Թուր Կեծակին և հայրենիքը զենքով պաշտպանելու կոչ է անում, որովհետև միայն խաղաղության պայմաններում է «Աշխարհ գութանի մոտ լիանում», միայն խաղաղ ու ստեղծագործ աշխատանքով պետք է շենացնենք մեր հայրենիքը: Այս է պատգամում մեր էպոսի հեղուկը, այս է ցույց տալիս պատմությունը: Միրելի հերոսի մասին պետք է գրի մասնակիցը:

Գնահատման չափանիշներ

1-ին հարց

Ենթահարցեր՝ 1 - 2 միավոր, 2 - 2 միավոր, 3 - 1 միավոր:

2-րդ հարց

Ենթահարցեր՝ 1 - 2 միավոր, 2 - 2 միավոր, 3 - 1 միավոր:

3-րդ հարց

Ենթահարցեր՝ 1 - 0,5 միավոր, 2 - 1,5 միավոր, 3 - 3 միավոր:

4-րդ հարց

Ենթահարցեր՝ 1 - 2,5 միավոր, 2 - 2,5 միավոր:

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան